

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով
07.05.2021թ. կայացված ԱՖ672158 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց
բավարարման թողնելու մասին

<< 07 >> 06 2021թ. 7-13- 9043

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս,
վերանայելով Տիգրան Խերանյանի ՄԴ/40956-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված
նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Վ.Վաղարշյան փողոցի 3 շենքի 35 բնակարանի բնակիչ Տիգրան Խերանյանը
դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման
վերաբերյալ գործով 07.05.2021թ. կայացված ԱՖ672158 որոշումը՝ նշելով, որ համաձայն չէ
որոշմամբ արձանագրված իրավախախտման հետ: Միաժամանակ հեռախոսակապի միջոցով
հայտնել է, որ դիմումին ավելացնելու ոչինչ չունի:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ
գործով 07.05.2021թ. կայացված ԱՖ672158 որոշումը ենթակա է կատարման հետևյալ
պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի
համաձայն՝ տրանսպորտային միջոցները ոչ սթափ վիճակում վարելը, եթե վարորդը միայն
ալկոհոլի ազդեցության տակ է, և զանցանքը չի պարունակում սույն հոդվածի երկրորդից
հինգերորդ մասերի հատկանիշները՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված
նվազագույն աշխատավարձի հարյուրիսնապատիկի չափով: Նույն հոդվածի 9-րդ մասի
համաձայն՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքում անձը համարվում է ոչ սթափ վիճակում
գտնվող, եթե ստուգմամբ պարզվում է, որ նրա մեկ լիտր արյան մեջ մաքուր ալկոհոլի
պարունակությունը 0.2 գրամից կամ մեկ լիտր արտաշնչած օդի մեջ 0.1 միլիգրամից ավելի է,
կամ եթե անձի արյան կամ մեզի մեջ առկա է թմրամիջոցի կամ հոգեմետ
(հոգեներգործուն) նյութի պարունակություն: Անձը համարվում է ոչ սթափ վիճակում գտնվող նաև
այն դեպքում, երբ նրա արյան կամ արտաշնչած օդի մեջ սույն մասում նշված չափով մաքուր
ալկոհոլի կամ արյան կամ մեզի մեջ թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի
պարունակությունը ոստիկանության ծառայողի կողմից տրանսպորտային միջոցը կանգնեցնելուց
կամ այդ անձին առնչվող ճանապարհատրանսպորտային պատահարից հետո, բայց մինչև նրա
սթափության վիճակի զննություն անցկացնելը կամ սթափության վիճակի զննություն անցնելուց
նրան ազատելը, այդ անձի կողմից ալկոհոլային խմիչք, թմրամիջոց կամ հոգեմետ
(հոգեներգործուն) նյութ օգտագործելու հետևանք է:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 07.05.2021թ. ժամը 21:53-ի սահմաններում Ջրվեժ –
Ձորաղբյուր ճանապարհահատվածում Տիգրան Խերանյանի վարած <<SUBARU>> մակնիշի
35PF651 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը կանգնեցվել է Ճանապարհային
ոստիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական վաշտի 1-ին սպայական
դասակի տեսուչներ, ոստիկանության ավագ լեյտենանտ Լ.Գալստյանի և ոստիկանության
կապիտան Է.Աղաբեկյանի կողմից ուժեղացված ծառայության շրջանակներում: Ստուգումից
պարզվել է, որ վարորդն ավտոմոբիլը վարել է ոչ սթափ վիճակում:

Ճանապարհային ոստիկանության ծառայողների կողմից տրված պարզաբանման համաձայն՝
քաղաքացի Տիգրան Խերանյանի վարած <<SUBARU>> մակնիշի 35PF651 հաշվառման

համարանիշի ավտոմոբիլը կանգնեցվել է ուժեղացված ծառայության շրջանակներում: Ստուգումից պարզվել է, որ վարորդն ավտոմոբիլը վարել է ոչ սթափ վիճակում, ինչը հիմնավորվում է <<Jupiter>> տեսակի թիվ 93000800 գործարանային համարի <<Ալկոտեստեր>> սարքով անցկացված սթափության աստիճանի գննությամբ, որի արդյունքում պարզվել է, որ վարորդի 1լ արտաշնչած օդի մեջ ալկոհոլի պարունակությունը կազմել է 0.123 մգ/լ, որի հիման վրա ոստիկանության ծառայող Լ.Գալստյանը կազմել է համապատասխան արձանագրություն և Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով կայացրել է ԱՖ672158 որոշումը: Ոստիկանության ծառայողները նշել են նաև, որ իրենց և վարորդի միջև ծառայողական բնույթի խոսակցություններից բացի այլ խոսակցություններ տեղի չեն ունեցել և ներկայացրել են <<Jupiter>> տեսակի թիվ 93000800 գործարանային համարի <<Ալկոտեստեր>> սարքի ստուգաչափման մասին թիվ 038853 վկայականը, որն ուժի մեջ է 27.10.2020թ.-ից մինչև 27.10.2021թ.-ը:

Հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի և << կառավարության 13.03.2009թ. թիվ 277-Ն որոշման համադրությամբ ստացվում է, որ վարորդը համարվում է ոչ սթափ վիճակում գտնվող, եթե նրա արտաշնչած օդի մեջ ալկոհոլի պարունակությունը 0.12 մգ/լ-ից ավելի, իսկ տվյալ պարագայում վարորդի 1լ արտաշնչած օդի մեջ ալկոհոլի պարունակությունը կազմում է 0.123 մգ/լ, այսինքն վարորդը գտնվել է ոչ սթափ վիճակում:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> կետի համաձայն՝ Ճանապարհային ոստիկանության ծառայողը պարտավոր է տրանսպորտային միջոցը կանգնեցնել, եթե ակնհայտ կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները: Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագության գերազանցման և տրանսպորտային միջոցների ապակիների լուսաթափանցելիության սահմանված չափի խախտումների համար պատասխանատվություն է առաջանում, երբ տվյալ խախտումը փաստարկված է համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցակազմը, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 07.05.2021թ. կայացված ԱՖ672158 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել << վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Տիգրան Խերանյանին և Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակ:



Ե. Կարապետյան